



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

2834.

400

Ученый из  
Удобрения и т.п. —

859

У-70

изучение  
1904

արմ

Հրատարակչություն

277

277  
5984

Ա.Լ. ԲԱՍՏԱՆԻ ԳԼՈՒԹԻՑ

Համար - 11  
Տարի - 1/2

ԱՆՄԽԻԹԱՐՆԵՐԸ

Համար - 3000

Բազմապատկեր, Ա

Թարգմ. Մեյք. Եսայանի.

Արտատպած «Մշակից» 1901 թ. № 212.

ԱԵՆԻՍՏԱՆԻ  
ԻՆՏԻՏՈՒՏԱ  
ՎՈՐՈՒՊԵՃԵՆՆԻ  
ԿԱՎՈՐՈՒՄ ԻՆՏԵ  
ՍՏԻՏՈՒՏ  
ՍՍՏՐ

Երբ որևիցե

որև Ս. Էսայան

ԲԱՍՏԱՆԻ

Տպարան «Արմ»  
1904.

№ 2003

859  
4-70

58

100  
802

arm  
5984

859  
4-70

Հրատ. «Արարժուհի»

Ալեքանդր Բլախուչե  
ԱԼԷԳՍԱՆԿԻ ՎԼԱԽՈՒՅԵ

Եզրանալուսման

ԱՆՄԽԻԹԱՐՆԵՐՐ

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОЧНОЕ АЗИАТИ  
Академия Наук  
СССР

Երեմիե Մանուկ Եսան  
Թարգմ. Մեղ. Եսայեանի.

Արարժուհի  
Արարժուհի «Մշակից» 1901 թ. № 212.

Արարժուհի  
1901 թ.  
N. 212.

Բ Ա Գ Ո Ւ  
Տ Վ Ա Ր Ա Ն Գ « Ա Ր Ա Ր »  
1904.

Արարժուհի  
1904.

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Дозволено Ценз. Тифлисъ, 28 Ноября 1903 г.

50207-ահ



35953-66

g

### ԱՆՄԽԻԹԱՐՆԵՐԸ

#### I

Աշխանաչին սարգ օր էր: Գերեզմանա-  
տան պահապանը աչում է շիրիմները՝ որբե-  
լով նրանց վրայից տերևները, որ գիշերը քա-  
մին բերել էր: Ծերունին իր սիրելիներն ունի  
մեռածների մէջ, որոնց հանգստարանները նա  
խնամքով պահպանում է:

Եթէ աղգահանները մոռանում են գերեզ-  
մանի վրա ծաղիկներ ցանել և կամ ձէթ լցնել  
կանթեղը<sup>1)</sup>, մօշ (քեռի) Սիմէօնը կը մօտանայ  
մոռցած շիրիմին, ցաւակցաբար՝ նրկար կը  
նայէ թառամող պտակներին, մարող կանթե-  
ղին և, վերջապէս, կը դիմէ տարաբախտ ննջն-  
ցեալին՝ կարեկից ճառով:

— Տեսնում ես, ես հէնց սկզբից գիտէի,  
որ քեզ էլ կը մոռանան: Հը՛, ինչ է, եղբայր

<sup>1)</sup> Բառի նկատմամբ սովորութիւն է գերեզման-  
ների վրա անկէջ պահել կանթեղը:

քեզ մօտ ոչ որ չէ՛ գալիս: Ի՞նչ են շինում նրանք: Իրենց համար ուտում են, խմում, զուարճանում... Բայց ոչի՛նչ, սպասիր, նրանց հերթն էլ կը գայ... բոլորը այստեղ կը լինեն... միմեանց ետևից... նրանց որդիներն էլ կ'ողբան մահուան միւս օրը... և էլի կը մոռանան. և կը մնան նրանք, ինչպէս և դու, առանց ծաղիկների և առանց ձկնի: Այսպէս է աշխարհիս կարգը... Ի՞նչ արած...

Այսօր մօշ Սիմէօնը ինչ որ լուռ է, ինքն իրան չէ խօսում: Ինչո՞ւ: Նրա ամբողջ ուշադրութիւնը յափշտակել է այն մահարձանը, որի շուրջը նա աւելում է: Արձանը դրուած է ընդամենը երկու օր առաջ: Մարմարիօնի վրա ոսկէ տառերը փայլում են արեգակի տակ: Արձանագրութիւնը ասում է. «Այստեղ հանդէտ է Ալեքսանդր Կօրնէա. ծնել է 6 մարտի 1849 թ., վախճանել է 2 սեպտեմբերի 1884 թ.»: Չուրջը այլ ևս ոչ մի ձայն չէ լսում, բացի չոր տերևների և աւելի խշխշոցից: Ազոտաների երամները խիտ կերպով ծածկել են մօտակայ ծառերի ճիւղերը: Երկինքը պարզ է. երկիրը նիրհում է:

Մօշ Սիմէօնը լաւ դիտէ, թէ ով է դուրս գալիս կանաչից, որը հէնց հիմա կանգ առաւ դռան մօտ: Դա տիկին Կօրնէան է: Բարձրահասակ, զժգոյն, նա մօտենում է դանդաղ կերպով, նրա աչքերը կուլ են դնացել և հայեացքը

մարել է: Չղարշի թեթև այլերները պատում են նրան ստքից մինչև գլուխ: Նա գալիս է և ոչինչ չէ նշմարում: Ծերունին մի կողմ է քաշում: Նա զգում է և յարգում այդ վիշտը. այդ արցունքները, որ ամին օր մատուցում են ննջեցեալին, որպէս խոստումն յաւիտեանական հաւատարմութեան:

— Խեղճ կին. ջահել է, գեղեցիկ, հարուստ, բայց տես, ի՛նչպէս է լալիս, ծունկ չորած շիրմի մօտ, մտածում է մօշ Սիմէօնը: — Ա՛յ վիշտ... Բայց ի՛նչ կարող ես անել... ամեն մարդու մէջ էլ իր որդն է նստած և կրծում է նրա սիրտը... Սակայն նրա այդ ցաւը կանցնի... մի ուրիշը լոյս կընկնի... և այսպէս մինչև վերջը, մինչև այն ժամանակ, երբ նա ինքն էլ կը պառկի սառն հողի տակ:

Մեռելների հետ քառասուն տարի չարուանակ հարեանութիւն անելուց յետոյ՝ մօշ Սիմէօնը այն եզրակացութեան եկաւ, որ սկսեց ինքն իրան անմահ համարել:

Բայց ինչո՞ւ տիկին Կօրնէայի այցելութիւնները այդպէս վրդովում են նրան: Պատճառն այն է, որ նա մտածում է անուշադրութեան մատնուած, մոռացուած շիրիմների մասին: Ահա արդէն մի քանի օր է, առաւօտները ասում է ինքն իրան. «Չեմ կարծում, որ նա այսօր գայ»:

Նա սպասում է... ականջ է գնում, ճա-

նաշում է ձիու սմբակների ծանօթ գրողիները, անիւների թրթուղոցը: Այդ նա է... Այդ հաստատակամութիւնը մինչև անգամ վրդովում է նրան: Միթէ տիկիներ այնպէս չէ, ինչպէս ուրիշները...

Եկաւ ձմեռը: Գերեզմանատունը քնած է սպիտակ, թանձր սառանի տակ: Այս սեւ ոտահետքերն են երևում ձիւնի հիւսերի վրա:— Միչա տիկնոջ հետքերը: Այդ նա է կրկին: Ո՛չ, մօջ Սիմէօն, նրա սիրտը այնպիսիներից չէ, որոնք մոռանում են: Նայի՛ր նա բոլորովին նիհարել է. նա թուլացել է ու մաշել, ինչպէս իր շղարչը: Երկիւղածութեամբ, ինչպէս և միշտ, նա ծունկ է խոնարհում և արցունքներով ուռուցում է տապանաքարը, և՛ վերջ չկայ այդ արցունքներին. և՛ թոււմ է, որ նրանց ազրիւրը երբէք չի ցամաքի: Նրա համար այլ ևս չկայ երջանկութիւն: Այն ամենը, ինչ որ նրան կապում էր կեանքի հետ թաղուած է գերեզմանի մէջ...

— Մօջ Սիմէօն, դու նորից շարժում ես գլուխդ: Ո՛րտեղից է այդ կասկածամտութիւնդ: Մեռելների մերձաւորութիւնը խտացրել է քո սիրտը. քո մէջ չը կայ այլ ևս կարեկցութիւն դէպի կենդանի թշուառները:

## II.

Գարուն է: Ծառերը բողբոջներ են արձակել: Մեռելների բնակարանը ամբողջովին ծածկուել է մատաղ, թաւ կանաչով: Օդի մէջ ծաւալում է մանուկ թարմութեան բուրմունքը և մի անորոշ զրգիւ, որ սիրոյ կոչ է անում: Գերեզմանատան դռները բաց են բոլորովին: Ժողովուրդը խմբում է պարիսպների մէջ: Նստում են սղր ու հեկեկանք: Նոր հլւր է կեկլ ճաշակելու յաւիտենական խաղաղութիւնը... Ահա թափօրը արգէն գերեզմանի մօտ է... Հեծեծանքը և հառաչանքը փոխում են սիրտ քրքրոց, յուսահատ բողբոջ... Քահանան կիսաերգելով կարգում է վերջին աղօթքները... Կերտնները աղօտ փայլիւմ են, ծուխը բուրվաւից կապոյտ, բարակ հոսանքով բարձրանում է օդի մէջ:

— Ո՛չ... ո՛չ: Նրան մի խլէք ինձնից: Թոյլ սուէք մի անգամ ևս նայել նրան:

Ցաւալի է լսել այդ տանջալից ձայնը... Սևազգեստ երիտասարդը, վշտից իրան կորցրած, խելագարի պէս թաւալում է, դէն հրելով բարեկամներին, որոնք բռնած պահում են նրան, դէպի գագաղն է նետուում, որը հէնց նոր են իջեցրել գերեզմանը: Նրան թոյլ չեն տալիս... նա լալիս է... սղօթում է...

Requiescat in pace <sup>1)</sup>)—յուղարկաւորութեան քայլերդի ձայնը խլացնում է ողբն ու հեկեկանքը. Եմբոխը ցրվեց, մեռելների օթեանում նորից տիրում է խորին լռութիւն: Արեգակը միայն՝ արքայական առատաձեռնութեամբ սողողում է նրան լոյսի հեղեղով:

Մի դժբախտ էլ ամեն առաւօտ գալիս է ողբալու շիրիմի վրա:

Մօշ Սիմէօնը աչքի տակովը նայում է նրան և փնթփնթում:

— Տես, տես, նրանք մինչև անգամ չեն էլ նկատում միմեանց: Զարմանալի է: Սա ինչ բան է: Հրմ... Կապրենք, կը տեսնենք:

Եւ իբրև, երկու անմտիթարներին բաժանող տարածութիւնը այնքան աննշան է, որ հեշտ էր նրանց համար միմեանց տեսնել և լսել: Բայց միթէ նրանց հոգիները ընդունակ են ըմբռնելու արտաքին աշխարհի տպաւորութիւնները: Կորուստի պատճառով երկուսն էլ ընկզմած են վշտի մէջ. ամբողջ աշխարհը եթէ կործանուէր, գուցէ նրանք չը նկատէին էլ այնքան վշտահար էին:

Ինդագին մայիսը առատօրէն ժպիտներ է շնորհում մեզ. երկիրը պճնուած է գարնանային վարդերով, ծառերը — ծաղիկներով: Ա՛խ, սրբան լաւ բան է կեանքը:

<sup>1)</sup> Կնճեա խաղաղութեամբ:

Այս ո՛ւմ երեխաներն են: Ի՛նչ գեղեցիկ են: Ի՛նչ ուրախ են հնչում նրանց բրբիջի զել ձայները մեռելների լռիկ օթեանում:

Մօշ Սիմէօնը անբաժան է այստեղից: Կարծես թէ նա էլ կամենում է մասնակցել մանկական այդ ուրախութիւններին, այդ անմեղ անհոգութեան, որը ո՛չ գիտէ, ո՛չ յիշում է և ո՛չ էլ նկատում իրերի մռայլ դրութիւնը, որը չըջապատում է նրանց:

Երեքը միասին ի՛նչպէս են աղմուկ բարձրացնում:

Խարտեաչ, արդէն բաւական մեծ օրիորդը տիկին Կօրնէայի աղջիկն է: Իսկ հրէն այն փոքրիկ աղջիկը և նրա փոքրիկ եղբայրը — խեղճ հանգուցեալ տիկնոջ երեխաներն են...

Նրանց հայրը լալիւ է... լալիս, ինչպէս կին:

Նայում ես նրան, սիրտդ պատուում է: Երեխաները բարեկամացան հէնց առաջին հանդիպումին: Այդ էր պակաս. երեխաների համար ինչ կայ որ:

— Հը՛, ի՛նչ կասես, մօշ Սիմէօն:

— Ո՛չ, ո՛չ... գիտեմ ինչ ես մտածում... բայց այդ անկարելի է: Անխելութիւն է ենթադրել, որ այդ երկու արարածների մէջ, որոնք խորտակուած են միևնոյն վշտից, կարող է... գլուխդ այդպէս մի շարժիր... նայիր, նրանք մինչև անգամ միմեանց չեն էլ նկատում:



ասում.— Ինչպէս ես դու կամենում, որ նրանք ծանօթանային: Աշխարհ, կեանք, յոյս— այդ ամենը այլևս գոյութիւն չունեն նրանց համար. այդ ամենը խլել է մահը: Գու ասում ես, որ նրանք այնուամենայնիւ կը ծանօթանան, և որ... Ո՛չ, ո՛չ, երկու շիրիմներ բաժանում են նրանց...

### III.

Ամառային պայծառ արեգակը երկրի վրա թափում է իր կենսարար լոյսի ջերմ հեղեղը: Գեանից գոլորշի է բարձրանում: Ծառերը արդէն թոթափել են իրենց ծաղկային զարդերը. օդի մէջ աննշմարելի կերպով սաւառնում է սէրը:

— Ներեցէք, եթէ չեմ սխալում, այս ձեր հովանոցն է:

— Զնորհակալեմ ձեզինք:

Երկուսն էլ խօսում էին առանց աչքները բարձրացնելու, բայց տիկինը մի թեթև կարմրեց: Երեսնաները հեռուից մնաս բարև են

ասում, օդային համբոյրներ ուղարկելով միմեանց, բղաւելով. «Ցտեսութիւն»:

Մօշ Սիմէօնը նայում է ամենքի վրա՝ ժպտալով, մի մարդու պէս, որը ամեն բան հասկանում և լուում է:

Աշնանային մի առաւօտ, աղջիկները և տղան միմեանց ձեռքից բռնած եկան: Ետեից, մի քանի քայլ հեռու, միմեանց հետ կամաց-կամաց գալիս էին ծնողները:


Այժմ երկու շիրիմներն էլ ամբողջովին ծածկուած են տերևներով, և մօշ Սիմէօնը այլ ևս չի աւրում այդ տերևները: Նրանց մօտից անցնելիս՝ նա շարժում է գլուխը և փրնթփրնթում:

— Ահա տեսնում էք, ես դիտէի, որ ձեզ ևս կը մոռանան...

35953-66









24

ВТМ  
5984

2834

МД

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ИСТОРИКО-ЯЗЫКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

КБНБ 1: 2 400

Г/ддг Баку, Биби—Эйбатъ  
Контора „А. И. Мангашевъ и К<sup>о</sup>“  
Давиду Меръ-Даниэляку

Handwritten signature

2013

